ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Վիոլետտա Սերգեյի Մանուկյանի «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ներկայումս Արցախի հանդեպ սանձահարված լայնածավալ ագրեսիան և օգտագործվող զարհուրելի մեթոդներն ու միջոցները ևս մեկ անգամ ապացուցում են չճանաչված պետությունների հանդեպ միջազգային հանրության անուշադրության զարհուրելի հետևանքները: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, անուշադրության մատնված և միջազգային համագործակցությունից ու աջակցությունից զրկված այս չճանաչված պետություններում ժամանակ առ ժամանակ պոռթկում է ռազմական լայնածավալ ագրեսիայի բոթը, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ անգամ ունենալով ավելի ծարհուրելի ընթացք և հետևանքներ:

Այս համատեքստում Վ. Մանուկյանի «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները» թեկնածուական ատենախոսության թեման և դրանում բարձրացված հիմնախնդիրներն արդիական են և շատ կարևոր, քանի որ հեղինակը ոչ միայն ներկայացնում է տվյալ պետությունների կայացման գնահատումն իր մշակած ինտեգրալ ցուցիչի միջոցով, այլև վերհանում առանցքային խնդիրները և միջազգային հանրության կողմից տվյալ խնդիրների լուծման աջակցության հնարավորությունները:

Այսպիսով, պետության կայացածության գնահատման գիտական գործիքների լրամշակման և կատարելագործման խնդիրն արդիական է հատկապես հայ ժողովրդի և հայկական երկու հանրապետությունների համար: Սույն թեկնածութական ատենախոսության շրջանակներում Արցախի Հանրապետության կայացածության

գնահատումը, ինչպես նաև համեմատությունը հետխորհրդային տարածքի մյուս չճանաչված պետությունների հետ, առանցքային նշանակություն ունի, ինչպես նաև կարող է դառնալ հակամարտության կարգավորման իրական գործոն՝ միջազգային հանրությանը ներկայացնելով ԱՀ կայացածության մակարդակը որպես անկախ և ինքնիշխան պետության արդյունավետ գործունեության հավաստիք:

Վ. Մանուկյանի թեկնածուական ատենախոսությունը համակարգված ուսումնասիրություն է, որում քանակական և որակական հետազոտության մեթոդների, քաղաքական վերլուծության և կանխատեսման, ինչպես նաև համեմատական քաղաքագիտության մեթոդների հիման վրա վերլուծված են պետության կայացածության գնահատման հնարավորությունները և հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները: Հեղինակին հաջողվել է ներկայացնել ամփոփ վերլուծական աշխատանք՝ առաջարկելով սեփական մոտեցումներն ու գաղափարները: Ատենախոսությունը կոնկրետ թեմատիկ նշանակության և մշակվածության աստիճանով արդիական է ու անհրաժեշտ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է դրա տեսական և գործնական նշանակությունը, հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների բնութագիրը, թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Փաստարկված և հիմնավորված է թեկնածուական ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում ներկայացված են նաև աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, փաստարկված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«Պետության կայացածության հատկանիշները և գնահատման մեթոդները»** հանգամանալից ուսումնասիրված են պետության կայացման հիմնական մոտեցումները և սահմանումները: Նմանօրինակ մոտեցման շնորհիվ՝ հեղինակը բացահայտել է «պետության կայացում»

հասկացության սահմանման հիմնական մարտահրավերները և տարբերությունները՝ աշխատանքի վերջին կառուցամասում առաջարկվելով այդ հասկացության համընդհանուր սահմանում: Այս առումով կարևոր է հեղինակի դիտարկումն առ այն, որ թեև «պետության կայացում» հասկացության գնահատման հայեցակարգեր ու մոդելներն սկսել են մշակվել դեռևս անցած դարի 60-ականներից, դրանք դեռևս լրամշակվում ու կատարելագործվում են: Հետևապես, տվյալ թեմայի ուսումնասիրությունը կարևոր է սույն գիտական ուղղության բացահայտման և լրամշակման համար, քանի որ պետության կայացածության գնահատումը և մարտահրավերների վերհանումը թույլ է տալիս գտնել առավել արդյունավետ լուծման տարբերակներ: Ըստ այդմ՝ հատկանաշական է հեղինակի կատարած հսկայական աշխատանքը նախ «պետության կայացում» հասկացության շուրջ մոտեցումների բազմազանության հինգ հիմնական խմբի բաժանման և համակարգված ներկայացման, այնուհետև պետության կայացածության գնահատման մոդելների դասակարգման՝ բաժանելով դրանք առանձին ոլորտների գնահատման ինդեքսների և ինտեգրալ ինդեքսների: Հեղինակը ներկայացրել է նաև գոյություն ունեցող մի շարք թե՛ առանձին ոլորտների գնահատման, թե՛ ինտեգրալ ինդեքսների օրինակներ և քննարկել, թե ինչ առավելություններ և թերություններ են առկա նրանցից յուրաքանչյուրում: Կատարված մանրակրկիտ ուսումնասիրության, ինչպես նաև հաջորդ կառուցամասերում իրականացրած հետազոտության շնորհիվ է հեղինակին հաջողվել մշակել «պետության կայացում» հասկացության համընդգրկուն սահմանում, ինչպես նաև պետության կայացածության աստիճանը հաշվարկող ինտեգրալ մոդել:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ»** դիտարկվում է պետության կայացածության և պետությունների միջազգային ճանաչման գործընթացների և վերջիններիս կապը կամ դրա բացակայությունը: Վերոհիշյալ կապի կամ դրա բացակայության դիտարկումն

առանցքային և միաժամանակ դժվար խնդիր է, որի ուսումնասիրության ժամանակ հեղինակը ցուցաբերել է հետաքրքիր մոտեցում՝ իրականացնելով հետազոտությունը ճիշտ ընտրված փուլային տրամաբանությամբ: Թերևս, ամենաուշագրավը պետության ճանաչման գործընթացի ներկայացումն է երկյուն համակարգի միջոցով՝ Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների և jus cogens նորմերի անխախտելիության տեսքով: Համընդգրկուն հետազոտության է ենթարկվել ազգերի ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև վերջինիս jus cogens և erga omnes իրավական կարգավիճակը: Միաժամանակ, հեղինակը ներկայացրել է Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշների վերլուծությունը, և ուշագրավ է հեղինակի եզրահանգումն առ այն, որ Մոնտեվիդեոյի կոնվենցիան նախանշում է այն ուղին, որը պետության հռչակումից տանում է դեպի ճանաչում: Առանձին հիշատակության է արժանի Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների դիտարկումը Արցախի և Կոսովոյի դեպքերի համար, հատկապես ներկայումս Կոսովոյի ճանաչման գործընթացի հետ զուգահեռներ անցկացնելու խոսակցությունների ակտիվացման համատեքստում:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Պետության կառուցման առանձնահատկությունները հետկոնֆլիկտային միջավայրում»**, հեղինակն իրականացրել է պետության կառուցման գործընթացի ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով այն բոլոր գործոնները, որոնք ազդում են վերոնշյալ գործընթացի վրա, ինչպիսին են պատմական և կառուցվածքային ժառանգությունը, ինչպես նաև արդի գլոբալ միջավայրում պետության կառուցման պայմաններն ու մարտահրավերներն: Հեղինակը կարողացել է համակարգված ներկայացնել պետության կառուցման գործընթացը պայմանավորող հիմնական գործոնները, և հուշագրավ է յուրաքանչյուրի շրջանակներում առանցքային դերակատարների ազդեցությունը և կենտրոն-ծայրամասեր հարաբերություններն ուսումնասիրելու միտքը: տեսական

նյութը համալրված է նաև դիպուկ օրինակներով, որոնք ներկայացնում են հետկոնֆլիկտային պետության կառուցման գործընթացի առանձնահատկությունների և մարտահրավերների բազմաթիվ գործնական դեպքեր:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ **«Չճանաչված պետությունների կայացման առանձնահատկությունները և հեռանկարները. հետխորհրդային տարածքի քառյակը»** ներկայացված է տեսական և կիրառական նշանակության գիտական նորույթ: Նախ, հեղինակն առաջարկել է «պետության կայացում» սահմանումը, որը, ըստ էության, ներկայացնում է նախորդ գլուխներում ներկայացված վերլուծության արդյունքը: Առաջարկվող սահմանման հիման վրա մշակվել է պետության կայացածության գնահատման ինտեգրալ մոդել, որի միջոցով հնարավոր է դառնում իրականացնել և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության համակողմանի ուսումնասիրություն և գնահատում: Անշուշտ, գնահատելի է չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունների ստեղծման նախաձեռնությունը, այն էլ հատկապես ճանաչված պետությունների հետ միաժամանակյա գնահատման համատեքստում: Վերջինս հատկապես կարևոր է, քանի որ այդ պետությունները, ըստ էության, ձգտում են միջազգային իրավասուբյեկտություն ձեռք բերել, այն է՝ ճանաչված պետություն դառնալ, հետևապես նախաձեռնությունը վերջիններիս դիտարկել արդեն ճանաչված պետությունների հետ կարող է բազմաթիվ հարցերի պատասխաններ տալ այդ պետությունների ճանաչման հիմքերի և հնարավորությունների մասին: Ուշադրության է արժանի նաև հեղինակի մշակած ինդեքսի մեթոդաբանությունը, որը փորձել է լուծել տարատեսակ ինդեքսներում հաճախ հանդիպող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են վավերականության, նույնականության, թափանցիկության խնդիրները: Առանձնահատուկ ուշադրության է արժանի տվյալ աշխատանքի շրջանակներում դիտարկվող չճանաչված պետությունների՝ Արցախի, Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի, համար առանցքային, կենտրոնական խնդիրների վերհանումը: Ուշագրավ են նաև քննարկվող չճանաչված պետություններում

կայացության մակարդակի խթանման համար հեղինակի կողմից առաջարկված հնարավորությունները, որտեղ հեղինակն առաջնահերթությունը տալիս է այդ պետություններում ապրող բնակչության վիճակի բարելավմանը:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսության հեղինակ Վ. Մանուկյանը համակողմանիորեն վերլուծության է ենթարկել հետազոտության գիտական նորույթով պայմանավորված խնդիրները՝ հասնելով ցանկալի արդյունքների: Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարված են առանցքային նշանակություն ունեցող եզրահանգումներ, ընդհանրացումներ և առաջարկություններ:

Սեղմագիրը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսության բովանդակությանը՝ լինելով դրա դրույթների համառոտ արտացոլումը:

Հեղինակի հրատարակած հոդվածներն ու աշխատություններն արտացոլում են թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն գիտագործնական նշանակություն:

Ատենախոսությունն աչքի է ընկնում գիտահետազոտական հիմնախնդիրների հիմնավորվածությամբ, տրամաբանական հետևողականությամբ և փաստարկվածությամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքի նորարարական և կիրառական բնույթով:

Կարևորելով և բարձր գնահատելով թեկնածուական ատենախոսությունը, ինչպես նաև նկատի ունենալով հետազոտության թեմայի բազմակողմանիությունը՝ ցանկանում ենք ներկայացնել հետևյալ դիտարկումները և հարցերը.

1. Միաժամանակ, հատկանշական է, որ հեղինակը հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների գնահատման ժամանակ մեծ դեր է հատկացրել հենց քաղաքացիական հասարակության զարգացման, ինչպես նաև վերջիններիս միջազգային հանրության աջակցության շնորհիվ առանցքային խնդիրների լուծման

հնարավորություններին: Կարծում ենք առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի ատենախոսության հեղինակը դիտարկեր նաև աշխատանքի տեսական կառուցամասերում պետության կայացածության մակարդակի և քաղաքացիական հասարակության, ինչպես նաև միջազգային քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կապը փոխազդեցությունը:

2. Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմի պայմաններում, հարցի իրավական լուծման ի՞նչպիսի տրամաբանություն է առաջարկում հեղինակը, հատկապես, աշխատանքի երկրորդ գլխում արծարծված միջազգային ճանաչման հնարավորությունների վերլուծության և Կոսովոյի հետ համեմատության համատեքստում:

Այսուհանդերձ, կարևորելով թեկնածուական ատենախոսության գիտական նորույթները և եզրակացությունները, ցանկանում եմ նշել, որ արված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում ներկայացված ատենախոսության արժեքը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ **Վիոլետտա Սերգեյի Մանուկյանի «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները»** ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ատենախոսն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների

ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, քաղ. գիտ. դոկտոր՝ Աշոտ Ալեքսանյան

Քաղ. գիտ. դոկտ., դոց. Ա. Ս. Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու՝ Լ. Ս. Հովսեփյան

ք. Երևան, 03.11.2020